

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N01

« Գեղարքունիքի մարզպետի 2012թ. սեպտեմբերի 11-ի №42-Ա կարգադրությամբ ստեղծված գեղերային հարցերով զբաղվող մշտական գործող, հանձնաժողովի 2014 թվականի մարտի 20-ին կայացած նիստի

Նիստը վարում էր հանաձնաժողովի նախագահ

Ա. Հակոբյանը, քարտուղարում՝ Մ.Գալոյանը:

1. Հանձնաժողովի 12 անդամներից մասնակցում էին 9-ը: Հրավիրված էին

Գավառ, Սևան, Նորատուս, Լճաշեն

և Գեղաքար համայնքների կանանց

հարցերով զբաղվող անդամներ

**Օրակարգում**

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից սահմանված « Լավագույն համայնք՝ գեղերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխությանը համայնքների կողմից մարզային մշտական հանձնաժողովին ներկայացրած հայտերի և հիմնահարցերի քննարկում, մրցանակաբաշխության մասնակից համայնքների ընտրություն:



( զեկ. մարզպետի տեղակալ Ա. Հակոբյան)

2. Գավառի, Սևանի, Նորատուսի, Լճաշենի և Գեղաքարի համայնքների կանանց խորհուրդների ղեկավարների հաշվետվության ներկայացում:

**Լսվեց՝** Հանձնաժողովի նախագահ Ա. Հակոբյանի հաղորդումը, որ « վարչապետի կողմից սահմանված « Լավագույն համայնք՝ գեղերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխությանը իրենց հայտերով և հիմնավորումներով ցանկություն են հայտնել մասնակցել 12 համայնք: Հանձնաժողովի կողմից այդ հայտերի և հիմնավորումների ուսումնասիրության արդյունքում ընտրվել է հինգ թեկնածու՝ Գավառ և Սևան քաղաքային, ինչպես նաև Նորատուս, Լճաշեն և Գեղաքար գյուղական համայնքները, որոնց ներկայացրած հիմնավորումները և գեղերային քաղաքականության ուղղությամբ

իրականացված ծրագրերը համապատասխանում են << վարչապետի կողմից սահմանված << Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> մրցանակաբաշխության հայեցակարգի պահանջներին:

*Որոշվեց* << վարչապետի կողմից ներկայացված << Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> մրցանակաբաշխությանը մասնակցելու համար ներկայացնել Գավառ, Սևան, Նորատուս, Լճաշեն և Գեղաքար համայնքների ներկայացրած փաստաթղթերը:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Հակոբյան
Զարտուղար՝		Մ. Գալոյան